

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԱՆԻԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԻ ՓԱՍՏԻ ՄԱՍԻՆ

Աննա Արևշարյան (Հայաստան)
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Բագրատունյաց շրջանի մտավոր վերնախավի փայլուն ներկայացուցիչներից էր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (980-1058)¹ խոշոր քաղաքական գործիչ, զորավար, հանրագիտակ գիտնական, գրող-բանաստեղծ, շարականագիր և գեղագետ, ում գրական ժառանգությունը շարունակում է գրավել ուսումնասիրողներին: Նա եղել է Անիի մշակութային մթնոլորտի վրա ներազդած այն գործիչներից, ով, ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի խոսքերով, այդ շրջանը բնորոշող նոր մտավոր հոսանքի արտահայտիչներից էր²: Ըստ էության, Դավիթ Անհաղթից և Անանիա Շիրակացուց հետո Գրիգոր Մագիստրոսը Հովհաննես Սարկավագ Իմաստասերի հետ միասին զարգացած ավատատիրության շրջանի գիտության աշխարհիկ ուղղության ներկայացուցիչներից էր: Աստիճանաբար խորացող աշխարհականացման ոգին արտացոլվել է Անիի թագավորության շրջանի քաղաքային կյանքի վերելքի և աշխարհիկ արվեստի մեջ, մասնավորապես, գրական աշխարհիկ նոր ժանրերի, օրինակ՝ առակի, զրույցի, նամակի՝ որպես գեղարվեստական գրականության ինքնուրույն ժանրի երևան գալով: Նույն երևույթի մասին է վկայում նաև գուսանական արվեստի մշակութային առօրյայում զբաղեցրած նկատելի տեղը, ինչի մասին մի շարք վկայություններ կան հենց Գրիգոր Մագիստրոսի Թղթերում: Գրիգոր Մագիստրոսի Նամականին հայ միջնադարյան մատենագրության եզակի մի գրական հուշարձան է, որտեղ բացի գեղարվեստական արժանիքներից՝ առկա են հանրագիտարանային գիտելիքներ, ուշագրավ տեղեկություններ ամենատարբեր բնագավառների՝ այդ թվում նաև երաժշտական արվեստի վերաբերյալ, ինչը վկայում է Մագիստրոսի բացառիկ գիտապաշարի և բազմակողմանի հետաքրքրությունների և օժտվածության մասին:

Արդեն այն փաստը, որ Գրիգոր Մագիստրոսը հիշատակվել է շարականագիրների միջնադարյան ցուցակներում², ինքնին ուշագրավ է:

¹ Մ. Աբեղյան *Երկեր*, հատ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 63:

² Տե՛ս Հ. Անսայան, *Հայկական մաթեմատիկություն*, հատ. Ա, Երևան, Հայկ ՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ LXVI, LXVII, LXVIII, LXXIV.

Սակայն այստեղ մեր նպատակը չէ անդրադառնալ նրա՝ իբրև շարականագրի ժառանգությանը: Այդ աշխատանքը մենք իրականացրել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում, մասնավորապես, «Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ» մենագրության մեջ³: Մեր նպատակն է ուշադրություն հրավիրել Մագիստրոսի նամակներից մեկում տեղ գտած Անիի երաժշտական կյանքի ճաշակն ու միգուցե բարձրաշխարհիկ գեղագիտական նորաձևության մասին վկայող մի փաստի վրա: Իշխան Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված նամակներից մեկում (<Ե-75) զետեղված է Անիի ճոխ հանրային հանդեսներից մեկի գեղեցիկ նկարագրությունը.

«Քաջ գիտեմք, - գրում է Գրիգոր Պաիվանի իշխանը,- զի հոյք ի հանդիսի հզորք եւ փառացի եւ փարթամք, եւ վիճակելոց դասք ոսկեհոտ զարդիք պարածածկեալք, սպիտակափառ եւ երաժշտական պարք գումարեալք դաստակերտացն տնօրինութեամք, եւ ուրիշ կաքաւեալք, եւ հնչմանց երգ արտակիտեալ եւ փողեալ քնարական ներդաշնակապէս. քանզի եւ այս ինքեանց յարտանցն ներքինեաց մաքրագոյն եւ վճիտ քմազարդութիւն պատկանեալ եւ յարմարեալ ծայնի»⁴:

Տվյալ ուշագրավ պարբերությունը վերջին տարիներին լույս տեսած երաժշտագիտական ուսումնասիրություններից մեկում թարգմանվել է հետևյալ կերպ. «Քաջ գիտենք, որ վիճակավորների ոսկեհյուս զարդերով ծածկված դասը, դաստակերտներում տնօրինաբար սպիտակափառ և երաժշտական պարեր գումարած (մարդկանց խումբը), և ուրբերով կաքավողները, դրսում հնչեցնող երգողները, և շեփորվող ներդաշնակ մեղեդիները, որովհետև սրանք ինքնին սեփականված են, (կարծում ենք), թրակացիներից, հարկապես (դա) ցածր դասի մարդկանց է պատկանելիս եղել, որոնք մաքրագույն և վճիտ (երգը քթի տակ (կատարվող) բացականչությունների ձևով կամ հարմարեցված ծայնով են կատարել»⁵:

Այս պարբերության թարգմանության մեջ կան անճշտություններ, բացթողումներ և պարզապես սխալ հասկացված բառակապակցություններ, ընդ որում հենց երաժշտական, կատարողական հասկացողություններին վերաբերող, օրինակ. «ի յարտանցն ներքինեաց մաքրագոյն եւ վճիտ

³ Տե՛ս Ա. Արևշատյան, Գրիգոր Մագիստրոսի երաժշտական ժառանգությունը, Պարմաբանասիրական հանդես, N 3, 2012, էջ 78-93; Նույնի՝ Անիի երաժշտական մշակույթը, «Երևան, «Գիտություն» հրատ., 2014, Գլուխ Գ և Դ, էջ 61-107; Նույնի՝ Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղագետ, Երևան, «Գիտություն» հրատ., 2015:

⁴ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Բնագիրն յառաջաբանով ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 222-223:

⁵ Տե՛ս Հ. Հարությունյան, Երաժշտությունը V-XV դարերի հայ մատենագրության մեջ, Երևան, 2010, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Հավելված, էջ 147:

քմազարդութիւն եւ բացականչութիւն պարկանեալ եւ յարմարեալ ծայնի» նախադասությունը, որը մենք թարգմանել ենք հետևյալ կերպ. «...այն հատուկ է պարկանավոր և հարմարեցված ծայնեղանակով արտիկյան ներքինիների մաքրագույն և վճիտ ներդաշնակ երգեցողությանը և բացականչությանը»: Այսինքն, խոսքն այստեղ կաստրատների կամ ներքինիների երգեցողության մասին է, որը հայտնի է եղել Անիում Բյուզանդիայից հրավիրվող կատարողների՝ կաստրատների շնորհիվ, իսկ Գրիգոր Մագիստրոսը, որպես բյուզանդական հոգևոր երգարվեստին և արքունիքի երաժշտական կյանքին քաջատեղյակ և գեղարվեստի հանդեպ զգայուն անձնավորություն, անդրադարձել է երևույթին՝ հավաստելով, որ այն առկա է եղել Անիում ևս:

Ակնհայտ է, որ թարգմանիչը անտեղյակ է եղել ոչ միայն ներքինիների երգեցողության փաստին Անիում, այլ նաև հենց բուն Բյուզանդիայում: Այնինչ հայտնի է, որ դեռևս V դարի սկզբին՝ 400 թ., Եվդոկիա կայսրուհու օրոք արքունի երգչախմբի խմբավարը՝ Բրիստն անունով, ներքինի է եղել, ինչը վկայում է ներքինիների մասնակցությունը բյուզանդական երգեցիկ խմբերում: Ներքինի երգիչներն առավել հայտնի ու սիրված են դառնում Մակեդոնյան դինաստիայի իշխանության օրոք: IX դարում Կոստանդնուպոլսի Սուրբ Սոփիայի տաճարի երգեցիկ խումբը բաղկացած է եղել ներքինիներից: Ներքինիների երգեցողությունը իր գագաթնակետին է հասնում XI դարում, Չոե կայսրուհու օրոք, որն, ամենայն հավանականությամբ, հովանավորել է մայր տաճարի երգեցողներին: Այդ երգեցողությունը պահանջված էր ընդհուպ մինչև 1204 թ., երբ չորրորդ խաչակրաց արշավանքի ընթացքում խաչակիրները գրավեցին և հարստահարեցին Կոստանդնուպոլիսը: Ներքինիների ծայնը և երգեցողությունը շատ հարգի էր և բարձր էր գնահատվում Բյուզանդիայում⁶: Այդ յուրահատուկ «անսեռ» երգչական տեմբրը, որն աչքի էր ընկնում մի կողմից՝ կանանց և դիսկանտներին հատուկ բարձր ծայնային ռեգիստրով ու ճկունությամբ, մյուս կողմից՝ բնորոշվում էր տղամարդկանց ծայնին հատուկ հզորությամբ, նմանեցվում էր հրեշտակային երգեցողությանը⁷:

Կարող է հարց ծագել. իսկ որտեղի՞ց ներքինիների երգեցողության այդ պաշտամունքը: Այն կապված է գեղագիտական մի ամբողջ ուսմունքի հետ, որն առաջատար նշանակություն ստացավ ողջ Միջնադարի ընթացքում: Դարերի ընթացքում քրիստոնեական եկեղեցին մշակեց իր գաղափարախոսական-աստվածաբանական գեղարվեստական տեսլականն ու դրան

⁶ Ներքինի-երգիչների մասին ավելի մանրամասն տե՛ս **II. Барбье**, Кастраты-певцы, в кн.: *История кастратов*, СПб, изд. “Ивана Лимбаха”, 2006, сс. 9-37.

⁷ Բյուզանդական կայսրության անկումից հետո, ավելի ուշ, գրեթե 300 տարի անց, կաստրատ երգիչների ավանդույթը վերածնվեց և կատարելագործվեց Իտալիայում՝ սկզբնավորվելով 1601 թ.:

համապատասխանող պահանջները, որոնք ձևավորվեցին նոր պլատոնականության և եկեղեցու հայրերի աստվածաբանական մեկնությունների ներքո: Դա ողջ միջնադարյան կանոնական արվեստի այսպես կոչված նույնության կամ նմանության էսթետիկան էր, որը դրսևորվեց եկեղեցական արվեստի բոլոր ճյուղերում՝ ճարտարապետություն, որմնանկար, մանրանկար, կիրառական արվեստ, հոգևոր երգեցողություն և այլն⁸: Մշակվեց տաճարում հնչող երգեցողության գեղագիտական մի իդեալ, ըստ որի՝ տաճարում հնչող երաժշտությունը հրեշտակների երգեցողության արտացոլումն է երկրի վրա: Դրա հիման վրա ձևավորվեցին նաև եկեղեցական երգեցողության աստվածաբանական մեկնության հիմնական բաղկացուցիչները՝ աստվածատուր լինելը, աստվածային ներշնչվածությունը և հրեշտակաձայն բնույթը (богоданность, боговдохновенность и ангелогласность)⁹, ինչը կապվում էր մի կողմից՝ Դիոնիսիոս Արեոպագացու¹⁰ և մյուս կողմից՝ Իսիդորոս Խորիվացու¹¹ հոգևոր փորձի և ուսմունքի հետ: Այդ գեղագիտական հիմքի վրա կազմավորվեց Աստվածային լույսը, շնորհը և գեղեցկությունը փառաբանող մի ուսմունք, որը հոգևոր երգարվեստում ստացավ այսպես կոչված գեղեցկաձայն կամ հրեշտակաձայն երգեցողություն անվանումը: Իբրև հոգևոր երգաստեղծության մեղեդիական ոճ՝ այն կոչվեց կալոֆոնիկ¹² ոճ, բառացիորեն՝ գեղեցկաձայն ոճ, իսկ ավելի մասնավորվեց համաքրիստոնեական նշանակության հրեշտակային կամ խերուբիկոն (херувимов, херувимская песнь) ժանրային տեսակում, ինչպես, օրինակ, «Հրեշտակային կարգաւորութեամբ», «Սուրբ, սուրբ», «Ով է որպէս», «Լոյս զուարթ» և այլ երգասացությունները: Այստեղից էլ կալոֆոնիա (καλοφονια) եզրը, որն ընդհանուր առմամբ բնորոշում է այդ երգեցողական ոճում հորինված երգասացությունները: Ահա այս գեղագիտական ուսմունքով են տոգորված միջնադարյան, հատկապես արևելաքրիստոնեական եկեղեցիների՝ հույն, հայ, վրաց, ռուս, բուլղար ուղղափառ և մյուս արևելաքրիստոնեական երաժշտական եկեղեցական մշակույթների ներքո ձևավորված ազգային հոգևոր երգարվեստի

⁸ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **В. Бычков**, 2000 лет христианской культуры, sub speciae aestheticae, часть 1-ая, Раннее христианство. Византия, Москва-С.Петербург, 1999, Университетская книга, сс. 85-86; տե՛ս նաև՝ **Վ. Ղազարյան**, Դիոնիսիոսի «նման» և «ոչ նման» կատեգորիաները և դրանց պատմական արժեքը, Հայ արվեստի հարցեր 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 114-121:

⁹ Տե՛ս **Д. Болгарский**, Киево-Печерский распев как отражение личности, в кн.: Православная монодия: ее богословская, литургическая и эстетическая сущность, «Науковий вісник», 15, Киев, 2001, сс. 21-38.

¹⁰ Տե՛ս **Դիոնիսիոս Արեոպագացի**, Աթենացիների եպիսկոպոս Դիոնիսիոս Արեոպագացին եփեսացիների Տիմոթեոս եպիսկոպոսին՝ երկնային քահանայապետությունների մասին, **Դիոնիսիոս Արեոպագացի**, Աստվածաբանական երկեր, փոխադրությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Ղազարյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 15, 19-20, 22-23, 34-35:

¹¹ Ճգնել է Սինայ լեռան վրա VI դարում: Նրա անվան հետ է կապված «իսիխազմ» հասկացությունը և համապատասխան հոգևոր ուղղությունը:

¹² Καλος - գեղեցիկ և φωνος - ձայն՝ հունարեն բառերից:

տեսակները: Հայ հոգևոր երգարվեստում այն լավագույնս դրսևորվել է Պատարագի և Երեկոյան ժամերգության գեղեցկագույն սրբասացություններում և Մանրուման արվեստում: Հետևաբար, քաջատեղյակ լինելով իրեն ժամանակակից Մակեդոնյան հարստության, մասնավորապես, XI դարի առաջին կեսի բյուզանդական հոգևոր երգարվեստի ավանդույթներին և նվաճումներին, Բագրատունիները որոշել էին ետ չմնալ Կոստանդնուպոլսից և ճոխացնել իրենց հանդիսությունները ներքինիների քաղցրալուր երգեցողությամբ: Հենց այդ գեղարվեստական իրողությանն է անդրադարձել Գրիգոր Մագիստրոսը Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված իր նամակում՝ ակնհայտորեն բարձր գնահատելով այդ երգեցողությունը և նրանից ստացած գեղագիտական վայելքը:

Ի դեպ, սա մի խոսուն վկայություն է, որ չնայած դավանաբանական տարածայնությունների, հայ-բյուզանդական երաժշտական կապերը բավական աշխույժ բնույթ են կրել: Այստեղ արժե ընդգծել այն հանգամանքը, որ հայ-բյուզանդական երաժշտական կապերն ուսումնասիրված են անբավարար չափով: Ընդհանուր բնույթի դատողություններից և թռուցիկ հիշատակումներից բացի՝ առ այսօր հրապարակի վրա է այդ հարցին նվիրված ընդամենը մեկ մասնագիտական հոդված: Դա վաստակաշատ երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանի՝ գրեթե կես դար առաջ լույս տեսած հոդվածն է, որը հրատարակվել է «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականում¹³, այնինչ, հայ-բյուզանդական մշակութային, այդ թվում նաև երաժշտական կապերը արժանի են առանձին ուշադրության և ուսումնասիրության: Վաղեմի պատմություն ունեցող այդ կապերի համադրության հիմքի վրա ձևավորված մի փայլուն օրինակ է հենց Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ինտելեկտուալ աշխարհը և ժառանգությունը:

Ամփոփում

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Բագրատունյաց շրջանի մտավոր վերնախավի փայլուն ներկայացուցիչներից էր: Նրա Թղթերը հայ միջնադարյան մատենագրության հանրագիտարանային գիտելիքներ պարունակող եզակի մի գրական հուշարձան են: Թիվ 75 նամակում (Ալեքսանդրապոլ, 1910), նկարագրելով Անիի հիշարժան ժողովրդական հանդիսություններից մեկը, Գրիգոր Մագիստրոսը հիշատակում է ատտիկյան, այսինքն՝ հույն ներքինիների երգեցողությունը: Տվյալ հատվածի սխալ թարգմանված լինելու պատճառով այդ ուշագրավ փաստը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Հոդվածում առաջարկվում է հատվածի համարժեք թարգմանությունը և մեկնաբանումը, ինչն ապացուցում է Բյուզանդիայից հրավիրված ներքինի երգիչների առկայությունը

¹³ Տե՛ս Ն. Թահմիզյան, Գրիգոր Գոգիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը, *Բանբեր Երևանի համալսարանի*, 1968, N 3:

Անիում: Նրանց «իրեշտակաձայն» երգեցողությունը արտացոլում էր այն ժամանակվա գեղագիտական տեսականը, եկեղեցու և հասարակության գեղարվեստա-երաժշտական ճաշակը:

Բանալի բաներ՝ Անի, Բագրատունիներ, Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, ներքինիների երգեցողություն:

УПОМИНАНИЕ ОБ ОДНОМ ФАКТЕ МУЗЫКАЛЬНОЙ ЖИЗНИ АНИ В “ПОСЛАНИЯХ” ГРИГОРА МАГИСТРОСА

*Анна Аревшатыан, доктор искусствоведения, профессор
Институт искусств НАН РА
Государственная консерватория имени Комитаса*

“Послания” одного из блестящих представителей интеллектуальной элиты Анийского царства эпохи Багратидов Григора Магистроса Пахлавуні (980-1058) - уникальный литературно-исторический памятник средневековой армянской книжной культуры, в которых наряду со многими сведениями из самых различных областей науки и искусства немало ценных сведений о музыкальной жизни столицы Багратидов Ани (IX-XI вв.), что свидетельствует об обширном кругозоре и научной эрудиции автора. В письме 75 (согласно нумерации первого издателя “Посланий” Карапета Костанянца, Александрополь, 1910), адресованному князю Торнику Мамиконяну, Григор Магистрос, описывая одно из памятных народных празднеств Ани, упоминает о пении аттических, то есть, греческих кастратов во время этого праздника. Фрагмент был неправильно переведен, вследствие чего данный факт выпал из поля зрения исследователей. В статье предлагается адекватный перевод фрагмента, а также его интерпретация, что доказывает наличие в Ани приглашенных из Византии кастратов-певцов, так называемое ангелогласное пение, которых соответствовало эстетическим идеалам и художественно-музыкальным вкусам церкви и общества того времени.

Ключевые слова: Ани, Багратиды, Григор Магистрос, Послания, пение кастратов.

ABOUT A FACT FROM THE MUSIC LIFE OF ANI MENTIONED IN THE LETTERS OF GRIGOR MAGISTROS

*Dr. Prof. Anna Arevshatyan (Armenia)
Honored Worker of Art of RA
Institute of Arts NAS RA
Komitas State Conservatory*

Grigor Magistros Pahlavuni (980-1058) was one of the outstanding representatives of the Bagratid Kingdom of Ani. His *Letters* are unique literary “memorials” that encompass encyclopedic information on Medieval Armenian literature, where one can find interesting facts on various fields of science and art, including information on the music life of the capital city of Ani. This witnesses Grigor Magistros’s exceptional knowledge, multifaceted interests and gifted nature. In his letter No. 75 (as corresponding to the enumeration of Karapet Kostanyants, who was the first publisher of the *Letters*, Aleksandropol, 1910), addressed to prince Tornik Mamikonyan, Grigor Magistros wrote about a folk festivity and mentioned the *Attikian* singers, that is to say the singing of the Greek castrates. As a result of the incorrect translation of this fragment, this remarkable fact was left out from the researchers’ sight. In this article, the adequate translation and interpretation of this fragment is proposed, which itself evidences the presence of the castrate singers in Ani invited from Byzantium. The so-called “angel-voiced” singing of theirs reflected the aesthetical priorities of those times, as well as the artistical-musical taste of the Church and the Society.

Key words: Ani, Bagratides, Grigor Magistros, Letters, chant of castrates.